

# ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԱՌՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

2 ԲՇ.

**ՍՐԲՈՑՆ՝ ԳԵՆԱՐԻՈՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԵՒ ՄԵՐԿԻՌԻՈՍԻ ԶԻՆԱԴՈՐԻՆ, ՅԱԿՈՎԿԱՅ ԵՒ ԻՐԱԲԱՓԱՌԱՅ**

**ԱՌԱՔԵԼԱԿԱՆ  
ՊՕՂՈՍ**

**ՆԱՄԱԿԻ**

**ԸՆԹԵՐՑՈՒՄ**

**ՊՕՂՈՍ**

**ԱՌԱՔԵԱԼԻ**

**ԵՐԿՐՈՐԴ**

**ՆԱՄԱԿԸ**

**ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ 3.18--4.6** Եւ մենք բոլորս ալ, որ բաց երեսով Տիրոջ փառքը կ'արտացոլացնենք հայելիի մը պէս, նոյն այդ պատկերով կը փոխակերպուինք՝ հետզհետէ աճող փառքով մը: Եւ այդ փոխակերպումը Տիրոջ Հոգին է որ կ'իրագործէ:

Հետեւաբար չենք յոգնիր այս պաշտօնէն, որ Աստուած մեզի տուաւ իր ողորմութեամբ: Հրաժարած ենք վարագոյրի ետին նիւթուած անօթալի գործերէն, այսինքն՝ խորամանկութիւն ի գործ չենք դնել եւ Աստուծոյ խօսքը չենք նենգափոխել: այլ բացէ ի բաց ճշմարտութիւնը կը յայտարարենք, եւ այսպէս կը ներկայանանք մարդոց առջեւ, ինչպէս պիտի ընէինք Աստուծոյ առջեւ: Իսկ հակառակ ասոր, եթէ մեր քարոզութիւնը մութ կը թուի ոմանց, մութ կը թուի միայն անոնց՝ որոնք կորուստի ճամբուն մէջ են: Այս աշխարհի «աստուած»ը նկատուած Սատանան կուրցուցած է այդ անհաւատներուն միտքը, որպէսզի չըլլայ որ Աւետարանին բերած լոյսը ծագի անոնց մէջ, այսինքն՝ տեսնեն փառքը Քրիստոսի, որ անտեսանելի Աստուծոյ պատկերն է: Սակայն մենք մեր անձերը չէ որ կը քարոզենք, այլ Տէրը՝ Յիսուս Քրիստոսը կը քարոզենք եւ Յիսուսի սիրոյն մենք մեզ ձեր ծառաները դարձուցած ենք: Որովհետեւ Աստուած ինք, որ ըսաւ՝ «*Խաւարին մէջ լոյս թող ծագի*», ինք մեր սիրտերուն մէջ ծագեցաւ, որպէսզի լուսաւորուինք եւ Աստուծոյ փառքը ճանչնանք Յիսուս Քրիստոսի անձին մէջ:

**ԱԲԵՏԱՐԱՆԻ**

**ԸՆԹԵՐՑՈՒՄ**

**ՅԻՍՈՒՄ**

**ՔՐԻՍՏՈՍԻ**

**ԱԲԵՏԱՐԱՆԸ**

**ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 12.2-9** Չկայ ծածուկ բան որ չյայտնուի եւ ոչ ալ գաղտնի բան՝ որ չգիտցուի: Որովհետեւ ինչ որ մութին մէջ կ'ըսէք՝ օր ցերեկով պիտի լսուի, եւ ինչ որ առանձին սենեակի մէջ իրարու ականջին կը փսփսաք՝ տանիքներէն բարձրաձայն պիտի քարոզուի:

Սիրելիներ, ձեզի կ'ըսեն.- Մի՛ վախճաք անոնցմէ որոնք մարմինը կը սպաննեն եւ ապա ուրիշ բան չեն կրնար ընել: Ըսեն թէ որմէ՛ պէտք է վախճաք: Վախցէք Աստուծմէ, որ ձեզ սպաննելէ ետք իշխանութիւն ունի դժոխք նետելու: Այո, կ'ըսեն ձեզի, անկէ վախցէք: Հինգ ճնճողուկը տասը դահեկան չ'ա՞րժեր, եւ սակայն անոնցմէ մէկն իսկ Աստուծոյ կողմէ մոռցուած չէ: Գալով ձեզի, ձեր գլխուն իւրաքանչիւր մագն իսկ համրուած է: Հետեւաբար մի՛ վախճաք, որովհետեւ դուք բոլոր ճնճողուկներէն աւելի արժէք ունիք Աստուծոյ աչքին:

Եւ կ'ըսեն ձեզի.- Ով որ մարդոց առջեւ դաւանի թէ ինձի կը հետեւի, Մարդու Որդին ալ

զինք իրեն հետեւորդ պիտի դաւանի Աստուծոյ հրեշտակներուն դիմաց: Իսկ ով որ զիս ուրանայ մարդոց առջեւ, նոյնպէս ալ Մարդու Որդին պիտի ուրանայ զինք Աստուծոյ հրեշտակներուն դիմաց:

**3 ԳՇ.**

**ՍՐՔՈՑՆ՝ ՄԻՆԱՍԱՅ, ԵՐՄՈԳԻՆԵԱՅ, ԵՒԳՐԱՓՈՍԻ ԵՒ ԿԱՍԱԻՈՐ ԱՂՔԱՏԱՅՆ՝ ՅՈԿՅԱՆՆՈՒ ԵՒ ԱԼԵՔՍԻԱՆՈՍԻ**

**ԱՌԱՔԵԼԱԿԱՆ  
ՊՕՂՈՍ**

**ՆԱՄԱԿԻ  
ԱՌԱՔԵԱԼԻ**

**ԸՆԹԵՐՅՈՒՄ  
ՆԱՄԱԿԸ**

**ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐՈՒՆ 1.27--2.4** Արդ, նայեցէք որ Քրիստոսի Աւետարանին վայել ձեւով ապրիք. որպէսզի, եթէ կարենամ գալ՝ անձամբ տեսնեն, իսկ եթէ չկարենամ գալ՝ ձեր մասին իմանամ, թէ հաստատուն կը մնաք, մէկ շունչ մէկ հոգի, եւ միասնաբար կը պայքարիք Աւետարանի հաւատքին համար: Երբեք մի՛ վախճաք հակառակորդներէն. այդ հակառակութիւնը անոնց կորուստին եւ ձեր փրկութեան ապացոյցն է: Եւ ատիկա Աստուծոմէ է. որովհետեւ Աստուած ո՛չ միայն Քրիստոսի հաւատալու շնորհքը տուաւ ձեզի, այլ նաեւ՝ անոր համար չարչարուելու շնորհքը, որպէսզի մղէք նոյն այն պատերազմը որ ես կը մղեմ, ինչպէս անցեալին տեսաք եւ հիմա կը լսէք:

Արդ, եթէ երբեք Քրիստոսի միացած ըլլալը մխիթարութիւն է, եթէ իր սէրը կը սփոփէ, եթէ Սուրբ Յոգին մարդիկը իրարու հաղորդակից կ'ընէ՝ զանոնք իրարու հանդէպ գթած ու ողորմած դարձնելով, ուրախութիւնս կատարեալ ըրէք՝ միաբանելով, նոյն սէրը ունենալով իրարու հանդէպ, եւ համերաշխ ու համախորհուրդ ըլլալով: Մի՛ ընէք ռելե՛ բան որ հակառակասիրութենէ կամ փառասիրութենէ մղուած ըլլայ. այլ՝ խոնարհ ոգիով՝ ձեր ընկերները աւելի լաւ համարեցէք քան դուք ձեզ: Միայն դուք ձեզ մի՛ մտացէք, այլ նաեւ՝ ձեր ընկերոջ մասին:

**ԱԲԵՏԱՐԱՆԻ ԸՆԹԵՐՅՈՒՄ ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ  
ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ 10.37-42**

Ով որ իր հայրը ու մայրը աւելի կը սիրէ քան զիս՝ արժանի չէ ինծի: Եւ ով որ իր տղան կամ աղջիկը աւելի կը սիրէ քան զիս՝ արժանի չէ ինծի: Ան որ իր խաչը չ'առնէր եւ ինծի չի հետեւիր, արժանի չէ ինծի: Ով որ իր կեանքը իրեն կը պահէ՝ պիտի կորսնցնէ զայն, եւ ով որ իր կեանքը կը կորսնցնէ ինծի համար, պիտի գտնէ զայն:

Ան որ ձեզ կ'ընդունի՝ զիս ընդունած կ'ըլլայ, եւ ով որ զիս կ'ընդունի՝ զիս դրկողը ընդունած կ'ըլլայ: Ով որ մարգարէ մը կ'ընդունի մարգարէ ըլլալուն համար՝ մարգարէի յատուկ վարձատրութիւն պիտի ստանայ, եւ ան որ արդար մը կ'ընդունի արդար ըլլալուն համար՝ արդարի վարձատրութիւն պիտի ստանայ: Եւ ով որ այս փոքրիկներէն մէկուն նոյնիսկ գաւաթ մը պաղ ջուր կու տայ խմելու՝ իմ աշակերտս ըլլալուն համար, վստահ եղէք որ իր վարձատրութիւնը պիտի չկորսնցնէ:

**4 ԳՇ. ՊԱՅՔ**

**ԱՌԱՔԵԼԱԿԱՆ  
ՊՕՂՈՍ**

**ԱՌԱՔԵԱԼԻ**

**ՆԱՄԱԿԻ**

**ԱՌԱԶԻՆ**

**ԸՆԹԵՐՅՈՒՄ  
ՆԱՄԱԿԸ**

**ԹԵՍԱԳՂՈՆԻԿԵՑԻՆԵՐՈՒՆ 5.1-11**

Բայց ինչ կը վերաբերի այս եղելութեանց ժամին ու ժամանակին, պէտք չեն զգար ձեզի ունէ բան գրելու, որովհետեւ անձամբ դուք շատ լաւ գիտէք, թէ ճիշդ ինչպէս գողը չսպասուած ժամուն կու գայ, այնպէս ալ Տիրոջ Օրը չսպասուած ժամուն պիտի գայ: Երբ որ մարդիկ ըսեն՝ «Չանգիստ ենք եւ ապահով», ճիշդ այն ատեն՝ յանկարծակի վրայ պիտի հասնի կործանումը, ինչպէս երկունքը յանկարծ կը բռնէ յդի կինը, եւ ազատում պիտի չունենան: Բայց դուք, եղբայրներ, դուք խաւարի մէջ չէք, որ Տիրոջ Օրը գողին պէս ձեզ անակնկալի բերէ: Որովհետեւ դուք բոլորդ լոյսի որդիներ էք, ցերեկի որդիներ: Գիշերին չենք պատկանիր, ո՛չ ալ խաւարին: Յետեւաբար քունով չտարուինք ուրիշներուն նման, այլ՝ արթուն եւ զգաստ ըլլանք, որովհետեւ քնացողները գիշերն է որ կը քնանան, զինովցողներն ալ գիշերն է որ կը զինովնան: Բայց մենք, քանի ցերեկին կը պատկանինք՝ պատրաստ ըլլանք, հաւատքի եւ սիրոյ զրահը հագած, եւ փրկութեան յոյսի սաղաւարտը դրած մեր գլխուն: Որովհետեւ Աստուած մեզ չէ՛ ընտրած որպէսզի իր բարկութեան առարկան դառնանք, այլ՝ որպէսզի իր փրկութիւնը ժառանգենք մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի ձեռքով: Արդարեւ, Քրիստոս մեզի համար մեռաւ, որպէսզի մենք իրմով կենդանի ըլլանք, իր գալուստին ատեն ողջ ըլլանք թէ մեռած: Յետեւաբար՝ քաջալերեցէք իրար եւ իրարու հաւատքը ամրապնդեցէք, ինչպէս արդէն կ'ընէք:

**ԱԲԵՏԱՐԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ**  
**ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 13.10-17** Շաբաթ օր մը Յիսուս ժողովարանին մէջ կ'ուսուցանէր: Հոն կին մը կար, որ տասնըութը տարիէ ի վեր հիւանդ էր՝ չար ոգիէ բռնուած ըլլալով, եւ այս պատճառով՝ մէջքը ծռած կը քալէր եւ բնաւ չէր կրնար շտկուիլ: Երբ Յիսուս տեսաւ կինը, իր մօտ կանչեց զայն եւ ըսաւ.- Ո՛վ կին, հիւանդութենէդ բժշկուած ես:

Յիսուս ձեռքերը անոր վրայ դրաւ, եւ կինը անմիջապէս բժշկուեցաւ եւ սկսաւ զԱստուած փառաւորել:

Ժողովրդապետը բարկացաւ, որովհետեւ Յիսուս Շաբաթ օրով կատարեց բժշկութիւնը, եւ ժողովուրդին դառնալով ըսաւ.- Շաբթուան մէջ վեց օր կարելի է աշխատիլ, ուստի այդ օրերուն եկէք եւ բժշկուեցէք եւ ոչ թէ Շաբաթ օր:

Տէրը անոր պատասխանեց.- Կեղծաւորներ, ձեզմէ իւրաքանչիւրը Շաբաթ օրով իր եզը կամ էշը ախռէն չի՞ քակեր եւ տանելով ջուր չի՞ տար անոր: Իսկ այս կինը, որ Աբրահամի աղջիկ է եւ Սատանային կողմէ տասնըութը տարիէ ի վեր գերուած, չէ՞ր արժեր որ Շաբաթ օրով ազատի:

Այս խօսքին վրայ անոնք որոնք կը հակառակէին Յիսուսի՝ անչցան, մինչ ամբողջ ժողովուրդը կ'ուրախանար Յիսուսի կատարած բոլոր հրաշագործութիւններուն համար:

5 ԵՇ.

**ՍՐԲՈՑ ՀԱՐՑՆ ԵԳԻՊՏԱՑԻՈՑ՝ ՊՕՂՈՍԻ, ՊՕՂԱՅ, ՄԱԿԱՐԱՅ, ԵՒԱԳՐԻ, ՅՈՎՀԱՆՆՈՒ ԳՐԵՑԻՈՅՆ, ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐՃԱՅԱԿԻՆ, ՆԵՂՈՍԻ, ԱՐՄԷՆԻ, ՍԻՍԻԱՆՈՒ, ԴԱՆԻԷԼԻ, ՍՐԱՊԻՈՆԻ, ՄԱԿԱՐԻՈՍԻ, ՊԻՄԷՆԻ**

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ  
ՊՕՂՈՍ

ՆԱՄԱԿԻ  
ԱՌԱՔԵԱԼԻ

ԸՆԹԵՐՑՈՒՄ  
ՆԱՄԱԿԸ

**ԵՔՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ 11.32-40** Ալ ի՛նչ շարունակեմ. ժամանակս չի բաւեր որ պատմեմ Գեղէոնի, Բարակի, Սամփսոնի, Յեփթայի, Դաւիթի ու Սամուէլի եւ միւս մարգարէներուն մասին, որոնք իրենց հաւատքով՝ թագաւորներ պարտութեան մատնեցին, արդարութիւն գործեցին եւ Աստուծոյ խոստումներուն տիրացան: Առիւծներու բերանները գոցեցին, կրակին զօրութիւնը մարեցին, սուրին բերանէն ազատեցան: Իրենց տկարութեան մէջ Աստուծոնով զօրացան, պատերազմի մէջ անպարտելի դարձան եւ օտարներուն բանակները ընկճեցին:

Հաւատքով՝ կիներ տեսան իրենց մեռելներուն յարութիւն առնելը: Շատեր տանջանքի տակ մեռան՝ մերժելով ազատութիւնը, որպէսզի լաւագոյն կեանքի մը համար յարութիւն առնեն: Ուրիշներ նախատինքներու եւ ծեծերու ենթարկուեցան, շղթաներու եւ բանտերու համը առին: Քարկոծուեցան, սղոցուեցան, փորձութեանց մատնուեցան, սուրով սպաննուեցան, ոչխարի կամ այծի մորթով ծածկուած շրջեցան՝ զրկանք, հալածանք ու չարչարանք կրելով, թափառական ապրելով անապատներու մէջ կամ լեռներու վրայ, քարայրներու կամ խռոչներու մէջ: Արդարեւ աշխարհը արժանի չէր այդ մարդոց:

Ասոնք բոլորը իրենց հաւատքով վկայուած ըլլալով հանդերձ՝ չստացան Աստուծոյ խոստումը. ըրովհետեւ Աստուած մեզի համար աւելի լաւ բան մը նախատեսած ըլլալով՝ չուզեց որ անոնք խոստումին իրականացման հասնին առանց մեզի:

ԱԲԵՏԱՐԱՆԻ  
ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ 10.37-42

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՅԻՍՈՒՄ

ՔՐԻՍՏՈՍԻ

ԱԲԵՏԱՐԱՆԸ

Ով որ իր հայրը ու մայրը աւելի կը սիրէ քան զիս՝ արժանի չէ ինծի: Եւ ով որ իր տղան կամ աղջիկը աւելի կը սիրէ քան զիս՝ արժանի չէ ինծի: Ան որ իր խաչը չ'առներ եւ ինծի չի հետեւիր, արժանի չէ ինծի: Ով որ իր կեանքը իրեն կը պահէ՝ պիտի կորսնցնէ զայն, եւ ով որ իր կեանքը կը կորսնցնէ ինծի համար, պիտի գտնէ զայն:

Ան որ ձեզ կ'ընդունի՝ զիս ընդունած կ'ըլլայ, եւ ով որ զիս կ'ընդունի՝ զիս զրկողը ընդունած կ'ըլլայ: Ով որ մարգարէ մը կ'ընդունի մարգարէ ըլլալուն համար՝ մարգարէի յատուկ վարձատրութիւն պիտի ստանայ, եւ ան որ արդար մը կ'ընդունի արդար ըլլալուն համար՝ արդարի վարձատրութիւն պիտի ստանայ: Եւ ով որ այս փոքրիկներէն մէկուն նոյնիսկ գաւաթ մը պաղ ջուր կու տայ խմելու՝ իմ աշակերտս ըլլալուն համար, վստահ եղէք որ իր վարձատրութիւնը պիտի չկորսնցնէ:

## 6 ՈՒՐ. ՊԱՅՔ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ  
ՊՕՂՈՍ

ՆԱՄԱԿԻ  
ԱՌԱՔԵԱԼԻ

ԸՆԹԵՐՑՈՒՄ  
ՆԱՄԱԿԸ

ԸՆԹԵՐՑՈՒՄ  
ՆԱՄԱԿԸ

**ԹԵՍԱԿՈՆԻԿԵՑԻՆԵՐՈՒՆ 5.12-28** Եղբայրներ, կ'ուզենք որ գնահատէք եւ յարգէք անոնք՝ որոնք ձեզի համար կ'աշխատին, եւ Տիրոջ կողմէ ձեզի առաջնորդ կարգուած ըլլալով՝ կը խրատեն ձեզ: Արժանի ամէն յարգանք ընծայեցէք անոնց եւ սիրեցէք զանոնք, իրենց տարած գործին համար: Իրարու հետ խաղաղութեամբ ապրեցէք:

Կը խնդրենք, եղբայրներ, խրատեցէք անկարգութեամբ ապրողները, յուսադրեցէք

վիատածները, պաշտպան եղէք տկարներուն, համբերատար եղէք բոլորին հանդէպ: Նայեցէք որ ոեւէ մէկը չարիք ընողին չարիք չհատուցանէ. այլ ջանացէք միշտ բարիք ընել՝ ըլլայ իրարու, ըլլայ բոլորին:

Միշտ ուրախ եղէք, անդադար աղօթեցէք: Ամէն բանի համար շնորհակալ եղէք, որովհետեւ Աստուած ասիկա կը սպասէ ձեզմէ, որ Քրիստոս Յիսուսի միացած էք:

Սուրբ Հոգիին կրակը մի՛ մարէք ձեր մէջ: Մի՛ արհամարիէք մարգարեական պատգամները: Ամէն բան քննեցէք, բարիին կառչեցէք: Ամէն տեսակի չարիքէ հեռու կեցէք:

Եւ Աստուած ինք, որ խաղաղութիւն կը պարգեւէ, թող կատարելապէս սրբէ ձեզ, եւ ձեր ամբողջ եւութիւնը՝ հոգի, շունչ եւ մարմին, անարատ պահէ մինչեւ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի գալստեան Օրը: Վստահեցէք Աստուծոյ, որ այդ նպատակով ձեզ հրաւիրեց եւ պիտի կատարէ իր խոստումը:

Եղբայրներ, մեզի համար ալ աղօթեցէք:

Սուրբ համբոյրով ողջունեցէք բոլոր եղբայրները:

Տիրոջ անունով կը խնդրեմ, որ այս նամակը կարդաք բոլոր հաւատացեալ եղբայրներուն ներկայութեան:

Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեզի հետ ըլլայ:

**ԱՒԵՏԱՐԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ  
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 14.1-11**

Շաբաթ օր մը Յիսուս մտաւ Փարիսեցիներու իշխանաւորներէն մէկուն տունը՝ ճաշելու համար: Ներկաները զինք կը դիտէին՝ տեսնելու համար թէ ինչ պիտի ընէ: Եւ հոն ջրգողեալ մարդ մը կար Յիսուսի դիմաց: Յիսուս հարցուց Օրէնքի ուսուցիչներուն եւ Փարիսեցիներուն.- Մեր Օրէնքը կ'արտօնէ՞ Շաբաթ օրով բժշկութիւն կատարել:

Անոնք լուռ մնացին: Յիսուս բօնեց մարդը, բժշկեց ու ճամբեց: Եւ ապա ըսաւ անոնց.- Եթէ ձեզմէ մէկուն էլը կամ եզը ջրհոր իյնայ, զայն չի՞ հաներ Շաբաթ օրով:

Եւ անոնք պատասխան չկրցան տալ:

Յիսուս տեսնելով թէ ինչպէս հրաւիրեալները պատուոյ տեղերը կը փնտռէին, անոնց հետեւեալ առակը պատմեց.- Եթէ մէկը քեզ հարսանիքի կամ խնճոյքի հրաւիրէ, սեղանին գլուխը մի նստիր, որովհետեւ կրնայ ըլլալ որ քեզմէ աւելի յարգելի անձ մըն ալ հրաւիրուած ըլլայ: Այն ատեն քեզ եւ զայն հրաւիրողը պիտի գայ եւ քեզի ըսէ՝ «Տեղդ իրեն տուր»: Եւ դուն խայտառակ ըլլալով՝ ամենէն վերջին աթոռին պիտի նստիս: Ընդհակառակը, երբ կը հրաւիրուիս՝ գնա եւ վերջին աթոռին նստէ, որպէսզի երբ քեզ հրաւիրողը գայ, ըսէ քեզի՝ «Բարեկամ, վեր հրամէ»: Այն ատեն դուն հրաւիրեալներուն մօտ պատուընուած պիտի ըլլաս: Որովհետեւ՝ ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, իսկ ով որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ:

**7 ՇԲ.**

**ՍՐԲՈՅՆ ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ԶՄԻՒՆԱՑԻՈՅ ԱՔԱՆՉԵԼԱԳՈՐԾ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

**ԱՌԱՔԵԼԱԿԱՆ**

**ՆԱՄԱԿԻ**

**ԸՆԹԵՐՑՈՒՄ**

**ՊՕՂՈՍ**

**ԱՌԱՔԵԱԼԻ**

**ԵՐԿՐՈՐԴ**

**ՆԱՄԱԿԸ**

**ՏԻՄՈԹԵՈՍԻ 3.10-17**

Բայց դուն կառչած մնայ իմ ուսուցումներու, կեանքի օրինակիս, յօժարութեանս, հաւատքիս, համբերատարութեանս, սիրոյս եւ յարատեւութեանս, որոնք ցուցաբերեցի՝ նոյնիսկ հաւածանքներուս եւ չարչարանքներուս մէջ: Գիտես թէ ինչ պատահեցաւ ինձի Անտիոքի, Իկոնիոնի եւ Լիստրայի մէջ. թէ ինչպիսի հաւածանքներ կրեցի, եւ այդ բոլորէն Տէրը զիս ազատեց: Նոյնպէս, բոլոր անոնք որոնք կ'ուզեն աստուածպաշտութեամբ Քրիստոս Յիսուսի միացած ապրիլ, անպայման հաւածանքներու պիտի ենթարկուին: Իսկ չար եւ խաբեբայ մարդիկ աւելի եւս պիտի յառաջանան չարութեան մէջ. իրենք մոլորած՝ ուրիշներն ալ պիտի մոլորեցնեն:

Բայց դուն հաստատ կեցիր քու սորված բաներուդ վրայ, որոնք ճշմարտութեան վստահ ես, որովհետեւ գիտես թէ որոնցմէ սորվեցար: Եւ արդէն մանուկ հասակէդ գիտես Սուրբ գիրքերը, որոնք զօրութիւնը ունին քու միտքդ իմաստութեան բանալու՝ որպէսզի Քրիստոս Յիսուսի հաւատաս եւ փրկուիս: Աստուծոյ ներշնչումով գրուած բոլոր Սուրբ գիրքերը օգտակար են՝ թէ՛ ճշմարտութիւնը ուսուցանելու եւ թէ՛ սխալը հերքելու, մարդս ճիշդ ճամբու մէջ դնելու եւ արդար կեանքի մը դաստիարակութիւնը տալու համար. որպէսզի Աստուծոյ նուիրուած մարդը կատարել ըլլայ եւ պատրաստ՝ ամէն տեսակի բարի գործերու:

**ԱԲԵՏԱՐԱՆԻ**

**ԸՆԹԵՐՑՈՒՄ**

**ՅԻՍՈՒՄ**

**ՔՐԻՍՏՈՍԻ**

**ԱԲԵՏԱՐԱՆԸ**

**ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ 10.11-16**

Ե՛ս եմ իրաւ հովիւը: Իրաւ հովիւը իր կեանքը կու տայ ոչխարներուն համար, մինչ վարձկանը, որ հովիւ չէ եւ որուն չեն պատկանիր ոչխարները, երբ կը տեսնէ որ գայլը կու գայ՝ կը լքէ ոչխարները ու կը փախչի, ձգելով որ գայլը յափշտակէ եւ ցրուէ ոչխարները, որովհետեւ վարձկանը չի մտահոգուիր ոչխարներուն վիճակով: Ե՛ս եմ իրաւ հովիւը: Կը ճանչնամ ոչխարներս եւ անոնք ալ զիս կը ճանչնան, այնպէս՝ ինչպէս Հայրը զիս կը ճանչնայ եւ ես՝ Հայրը: Ես կեանքս կու տամ ոչխարներուս համար: Տակաւին ուրիշ ոչխարներ ալ ունիմ, որոնք այս փարախէն դուրս են. պարտաւոր եմ զանոնք եւս ներս բերել: Անոնք ալ ինձի մտիկ պիտի ընեն, եւ պիտի ըլլան մէկ հօտ՝ մէկ հովիւով:

**8 ԿԻՐ. Գ. ԿԻՐԱԿԷ ՅԻՍՆԱԿԱՑ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ Ս. ՅԱԿՈԲԱՅ ՊԱՅՈՑ**

**ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԵՆ 37.14-38** Եզեկիա պատգամաւորներուն ձեռքէն առաւ նամակը, եւ կարդալէ ետք գնաց Տիրոջ տաճարը մտաւ եւ Տիրոջ առջեւ փռեց զայն: Ապա Եզեկիա Տիրոջ աղօթեց, ըսելով. *«Ո՛վ Երկնաւոր Զօրքերու Տէր, Իսրայէլի Աստուածը, որ քերովքէներէն վեր կը նստիս. դո՛ւն ես միակ Աստուածը աշխարհի բոլոր թագաւորութեանց, որովհետեւ երկինք ու երկիր դո՛ւն ստեղծեցիր: Ականջ տուր եւ լսէ՛, Տէ՛ր, նայէ եւ տես այն պատգամը որ Սենեքերիմ թագաւորը ղրկեց՝ նախատելու համար քեզ, որ կենդանի Աստուածն ես: Իրաւ է որ Ասորեստանի թագաւորները ամբողջ աշխարհը աւերեցին եւ բոլոր ժողովուրդներու*

*կուռքերը այրեցին, որովհետեւ անոնք աստուածներ չէին, այլ մարդոց ձեռքով շինուած փայտ ու քար էին եւ ուստի փճացան: Բայց դուն, ո՛վ Տէր, մեր Աստուածը, ազատէ՛ մեզ անոր ձեռքէն, որպէսզի աշխարհի բոլոր թագաւորութիւնները ճանչնան թէ միայն դո՛ւն ես Աստուածը»:*

Այն ատեն Աստուած Ամոսի որդի Եսային ղրկեց Եգեկիային մօտ, եւ անկա գալով, ըսաւ. «Այսպէս կ'ըսէ Տէրը, Իսրայէլի Աստուածը.- Լսեցի ինչ որ աղօթքով խնդրեցիր ինձմէ Ասորեստանի Սենեքերիմ թագաւորին համար: Ահա, Աստուած այսպէս կ'ըսէ անոր. "Սիոն քաղաքը, որ չկրցար գրաւել, պիտի անարգէ եւ արհամարհէ քեզ, Երուսաղէմի բնակչութիւնը պիտի հեզնէ ու ծաղրէ քեզ:

Գիտե՞ս դուն՝ ո՛վ նախատեցիր ու գրգռեցիր, որո՛ւ դէմ յոխորտացիր. դուն արհամարհանքով նայեցար Իսրայէլի Սուրբ Աստուծոյն որ բարձունքներուն մէջ կը բնակի. քու պատգամաւորներուդ միջոցաւ Տէրը նախատեցիր: Պարծենալով ըսիր. "Իմ բազմաթիւ կառքերովս մինչեւ լեռներու կատարը բարձրացայ, մինչեւ Լիբանանի գագաթները ելայ եւ կտորեցի անոր մայրիներուն հպարտութիւնը, անոր նոճիներուն գեղեցկութիւնը, եւ հասայ մինչեւ հեռաւոր խորքը անտառին:

*Ուզած տեղս կամուրջ նետեցի եւ ուզած տեղս գետերն ու լիճերը ցամքեցուցի":*

Չե՞ս լսած թէ աշխարհը ե՛ս ստեղծեցի կանուխէն եւ ե՛ս կարգաւորեցի զայն ժամանակի սկիզբէն. եւ հիմա ե՛ս ուզեցի որ դուն ազգերն ու իրենց ամրոցները ւաւերես. ե՛ս էի քաղաքներու եւ բերդերու բնակիչները ձեռքդ յանձնողը: Չեռքս վերցուցի անոնց վրայէն, եւ իսկոյն չորցան, տանիքին չորցած խոտին պէս եղան, կամ՝ հունձքէն առաջ չորցած սէզին պէս:

*Արդ, ես գիտեմ՝ դուն ո՛ւր կը հանգչիս, դէպի ո՛ւր կ'երթաս եւ ուրկէ կու գաս:*

*Ինձի հանդէպ արտայայտած քու զայրոյթիդ եւ թափած դառնութեանդ համար՝ բերանակապ պիտի անցընեմ դունչիդ, սանձ պիտի դնեմ կզակիդ, եւ քեզ եկած ճամբովդ ետ պիտի դարձընեմ"»:*

Իսկ քեզի, ո՛վ Եգեկիա, Տէրը այսպէս կ'ըսէ. «Յետեւեալը քեզի նշան թող ըլլայ.- այս տարի անցեալ տարուան ցանքը պիտի ուտէք, իսկ գալ տարի՝ ինչ որ մնացած գտնէք. երբ երրորդ տարին գայ՝ պիտի սերմանէք ու հնձէք, այգի պիտի տնկէք եւ անոր պտուղը վայելէք:

Հրէաստանի ժողովուրդին մնացորդը դարձեալ արմատ պիտի նետէ իր հողին վրայ եւ պտուղ պիտի տայ:

Այդ մնացորդը՝ Երուսաղէմ ապաստանողները պիտի ըլլան, որոնք իրենց փրկութիւնը պիտի գտնեն Սիոն լեռան վրայ»:

Երկնաւոր Զօրքերու Տէրը նախանձախնդրութեամբ պիտի կատարէ այս խոստումները:

Այդ պատճառով ալ, Տէրը այսպէս կ'ըսէ Ասորեստանի թագաւորին մասին. «Անկա այս քաղաքը պիտի չմտնէ. ո՛չ նետ պիտի արձակէ ասոր վրայ, ո՛չ վահաններով պիտի յարձակի եւ ո՛չ ալ պատնէշներով քաղաքը պիտի պաշարէ. եկած ճամբով ետ պիտի երթայ եւ այս քաղաքը պիտի չմտնէ:

*Ես պիտի պաշտպանեմ եւ ազատեմ այս քաղաքը, ինձի եւ իմ ծառայիս՝ Դաւիթին համար»,- կ'ըսէ Տէրը:*

Նոյն գիշերն իսկ Տիրոջ հրեշտակը եկաւ եւ ասորեստանցիներու բանակէն հարիւր ութսունհինգ հազար մարդ կոտորեց. բանակայինները երբ առաւօտուն ելան, զանոնք բոլորը մեռած գտան: Սենեքերիմ թագաւոր հոնկէ ելաւ եւ վերադարձաւ իր տունը, Նինուէ: Եւ երբ օր մը իր հովանաւոր աստուծոյն՝ Նասրաքի տաճարին մէջ երկրպագութիւն կ'ըներ, իր երկու զաւակները՝ Ադրամելէք եւ Սանասար, զինք սուրով սպաննեցին եւ փախան Զայաստան\* գացին: Իսկ Սենեքերիմի տեղ թագաւորեց իր տղան՝ Ասորդանը:

**ԱՌԱՔԵԼԱԿԱՆ**

**ՆԱՄԱԿԻ**

**ԸՆԹԵՐՑՈՒՄ**

**ՊՕՂՈՍ**

**ԱՌԱՔԵԱԼԻ**

**ԵՐԿՐՈՐԴ**

**ՆԱՄԱԿԸ**

**ԹԵՍԱԴՈՆԻԿԵՑԻՆԵՐՈՒՆ 1.1-12**

Մենք՝ Պօղոս, Սիղուանոս եւ Տիմոթէոս, կը գրենք ձեզի՝ թեսաղոնիկեցիներու եկեղեցիին որ մեր Զօր Աստուծոյ եւ Տէր Յիսուս Քրիստոսի կը պատկանի: Թող Աստուած մեր Զայրը եւ Տէր Յիսուս Քրիստոս շնորհք եւ խաղաղութիւն պարգեւեն ձեզի:

Եղբայրներ, պարտք կը զգանք եւ արդար կը գտնենք ձեզի համար միշտ գոհութիւն յայտնել Աստուծոյ, որովհետեւ ձեր հաւատքը հետզհետէ աւելի կ'աճի եւ ձեզմէ իւրաքանչիւրին սէրը իրարու հանդէպ աւելի կը խորանայ: Աստուծոյ եկեղեցիներուն մէջ մենք կը պարծենանք ձեզմով, այն համբերութեան եւ հաւատքին համար որ դուք ցուցաբերեցիք ձեր կրած բոլոր հալածանքներուն եւ նեղութիւններուն մէջ: Չեր այդ համբերութիւնը եւ հաւատքը ապացոյց պիտի ըլլան Աստուծոյ արդար դատաստանին, որովհետեւ դուք արժանի պիտի ըլլաք Աստուծոյ արքայութեան, որուն համար այդքան կը տանջուիք: Արդարեւ, Աստուծոյ համար արդարութիւն պիտի ըլլայ ձեզ չարչարողները տանջանքով պատժել, իսկ ձեզի՝ տանջուածներուդ, հանգիստ պարգեւել մեզի հետ միասին, երբ մեր Տէրը Յիսուս հրեշտակներու իր բանակով երկինքէն յայտնուի: Անիկա բոցավառ կրակով պիտի պատժէ անոնք՝ որոնք կը մերժեն զԱստուած ճանչնալ եւ հնազանդիլ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի աւետարանին: Այն օրը այդպիսիները յաւիտենական մահուամբ պիտի պատժուին, զրկուելով Տիրոջ ներկայութենէն եւ անոր փառաւոր զօրութենէն, երբ անիկա գայ իր սուրբերուն մէջ փառաւորուելու եւ բոլոր իրեն հաւատացողներուն հիացումին առարկայ ըլլալու: Այն օր պիտի գիտնաք թէ ճշմարիտ էր ինչ որ յայտնեցինք ձեզի: Ահա թէ ինչու միշտ կ'աղօթենք ձեզի համար, որպէսզի Աստուած ձեզ արժանի ընէ այդ կոչումին, իր զօրութեամբ կատարէ ձեր բոլոր բարի փափաքները եւ արդիւնաւորէ ձեր հաւատքը, որպէսզի ձեզմով փառաւորուի մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի անունը, եւ դուք փառաւորուիք իրմով, մեր Աստուծոյն եւ Տիրոջ Յիսուս Քրիստոսի պարգեւած շնորհքովը:

**ԱԲԵՏԱՐԱՆԻ**

**ԸՆԹԵՐՑՈՒՄ**

**ՅԻՍՈՒՄ**

**ՔՐԻՍՏՈՍԻ**

**ԱԲԵՏԱՐԱՆԸ**

**ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 14.12-24**

Ապա Յիսուս տանտիրոջ ըսաւ. «Երբ ճաշի կամ ընթրիքի հրաւեր կու տաս, մի՛ կանչեր բարեկամներդ կամ եղբայրներդ, որպէսզի չըլլայ որ անոնք ալ քու հրաւերիդ»

*փոխարեն քեզ հրաւիրեն, եւ այս ձեռով քեզի հատուցում կատարած ըլլան: Ընդհակառակը, երբ ընդունելութիւն կը սարքես, կանչէ աղքատներն ու խեղանդամները, կաղերն ու կոյրերը եւ այն ատեն երանելի պիտի ըլլաս, որովհետեւ անոնք քեզի փոխարէնը հատուցանելիք ոչինչ ունին: Եւ գիտցած եղիր, որ քու հատուցումդ պիտի ստանաս արդարներու յարութեան ժամանակ»:*

Երբ սեղանակիցներէն մէկը այս խօսքերը լսեց, ըսաւ Յիսուսի. *«Երանի՜ անոր որ Աստուծոյ արքայութեան մէջ ճաշ պիտի ուտէ»:*

Յիսուս անոնց հետեւեալ առակը պատմեց.- Մարդ մը կար որ մեծ ընթրիք մը սարքեց եւ շատեր հրաւիրեց: Ընթրիքի ժամուն իր ծառան դրկեց որպէսզի հրաւիրեալներուն ըսէ. *«Եկէ՛ք, ամէն ինչ պատրաստ է»:* Հրաւիրեալները սկսան մէկ առ մէկ հրաժարիլ: Առաջինը ըսաւ. *«Ազարակ գնեցի. պէտք է երթամ եւ տեսնեմ զայն. հետեւաբար կը խնդրեմ որ ներողամիտ գտնուի»:* Միւսը ըսաւ. *«Հինգ զոյգ եզ գնեցի. պէտք է երթամ փորձեմ զանոնք. հետեւաբար կը խնդրեմ որ ներողամիտ գտնուի»:* Ուրիշ մը ըսաւ. *«Տակաւին նոր ամուսնացայ. հետեւաբար չեմ կրնար գալ»:* Ծառան վերադարձաւ եւ իր տիրոջ պատմեց անոնց ըսածները: Այն ատեն տանտէրը վրդոված՝ ըսաւ ծառային. *«Անմիջապէս քաղաք գնա եւ հրապարակներուն ու փողոցներուն մէջ որքան որ աղքատ, խեղանդամ, կաղ եւ կոյր տեսնես, բոլորն ալ հոս բեր»:* Քիչ ետք ծառան վերադառնալով իր տիրոջ ըսաւ. *«Տէ՛ր, հրամանդ կատարեցի, բայց տակաւին տեղ կայ»:* Տէրը ծառային հրամայեց. *«Քաղաքէն դուրս գնա եւ ճամբաներուն վրայ ու դաշտերուն մէջ ո՛վ որ գտնես, ստիպէ որ գայ, որպէսզի տունս լեցուի: Կ'ըսեմ ձեզի, որ առաջին հրաւիրեալներէն ո՛չ մէկը ինձի հետ ընթրիքի պիտի նստի»:*

---

\* Եբրայերէնը կ'ըսէ. «Արարատի երկիրը» (-Ուրարտու):